ԿԱՐԳ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԶՈՀՎԱԾ (ՄԱՀԱՑԱԾ) ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ՀԱՎԱՍԱՐԵՑՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՅՈՒՆ ԵԿԱՄՏԻ ԱՂԲՅՈՒՐԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍԵՓԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՆՐԱՆՑ ԻՆՔՆԱԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ (ՉԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՎ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ) ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ»

I. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

1. «Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների հետևանքով զոհված (մահացած) զինծառայողների և նրանց հավասարեցված անձանց ընտանիքների համար կայուն եկամտի աղբյուրի հնարավորության ստեղծման նպատակով սեփական ձեռնարկատիրական գործունեության իրականացման, ինչպես նաև նրանց ինքնազբաղվածության (չիրականացնելով ձեռնարկատիրական գործունեություն) ապահովման եղանակով պետական աջակցության տրամադրման կարգով» (այսուհետ՝ Կարգ) կարգավորվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների հետևանքով զոհված (մահացած) զինծառայողների և նրանց հավասարեցված անձանց (այսուհետ՝ Զոհված անձ) ընտանիքներին աջակցության տրամադրման պայմանների հետ կապված հարաբերությունները:

Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների հետևանքով զոհված (մահացած) զինծառայողներին հավասարեցված անձինք են համարվում «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի հոդված 3-ով սահմանված անձինք:

2. Զոհված անձանց ընտանիքներին սույն Կարգի շրջանակներում պետական աջակցության ցուցաբերումն իրականացվում է ՀՀ էկոնոմիկայի նախարարության և Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի միջոցով (այսուհետ՝ Հիմնադրամ):
Կարգի իրականացման ընթացքում ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը համագործակցում է ՀՀ պաշտպանության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունների հետ:

3. Սույն Կարգի նպատակն է՝ Զոհված անձանց ընտանիքների համար (այսուհետ՝ Շահառուներ) կայուն եկամտի աղբյուրի հնարավորության ստեղծումը՝ սեփական ձեռնարկատիրական գործունեության իրականացման, ինչպես նաև նրանց ինքնազբաղվածության (չիրականացնելով ձեռնարկատիրական գործունեություն) ապահովման եղանակով, որը կարող է լինել անտոկոս փոխառությունների կամ տարաժամկետ վճարման պայմանով գույքի տրամադրման միջոցով:

II. ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

4. Շահառուներ են հանդիսանում՝

1) զոհված անձի ամուսինը կամ զոհվելու պահին 23 տարին չլրացած զավակը (վերջինիս անչափահաս լինելու դեպքում՝ նրա խնամակալը)՝ անկախ նրանց բնակության վայրից, զոհված անձի ծնողը, 23 տարեկանից բարձր տարիք ունեցող զավակը, եթե նրանք զոհվելու օրվա կամ պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու կամ զինվորական ծառայության կապակցությամբ բնակության վայրը փոխելու (ծառայողական բնակարան տեղափոխվելու կամ բնակելի տարածությունների վարձակալության համար դրամական փոխհատուցում ստանալու իրավունք ձեռք բերելու) օրվա դրությամբ համատեղ բնակվել են զոհվածի հետ նույն բնակության վայրում,

2) զոհված անձի քույրը, եղբայրը, թոռը, եթե նրանք զոհվելու օրվա կամ պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու կամ զինվորական ծառայության կապակցությամբ բնակության վայրը փոխելու (ծառայողական բնակարան տեղափոխվելու կամ բնակելի տարածությունների վարձակալության համար դրամական փոխհատուցում ստանալու իրավունք ձեռք բերելու) օրվա դրությամբ համատեղ բնակվել են զոհվածի հետ նույն բնակության վայրում:

5. Յուրաքանչյուր Զոհված անձի համար աջակցություն կարող է ստանալ միայն մեկ Շահառու՝ հետևյալ սկզբունքով.

1) Առաջնահերթության կարգով Շահառու է ճանաչվում սույն կարգի չորրորդ կետի առաջին ենթակետով սահմանված Շահառուներից մեկը՝ նույն ենթակետում նշված մյուս Շահառուների գրավոր համաձայնությամբ:

2) Եթե սույն կարգի չորրորդ կետի առաջին ենթակետով սահմանված կարգով Շահառուներ առկա չեն կամ Շահառուները հրաժարվում են Շահառուի իրենց իրավունքից, ապա Շահառու կարող է ճանաչվել սույն կարգի չորրորդ կետի երկրորդ ենթակետով սահմանված Շահառուներից մեկը՝ սույն կարգի չորրորդ կետի առաջին ենթակետում նշված Շահառուների, եթե առկա են և երկրորդ ենթակետում նշված մյուս Շահառուների գրավոր համաձայնությամբ:

6. Եթե սույն կարգի 4-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված կարգով հնարավոր չէ Շահառուի ճանաչումը և առկա են տարաձայնություններ Շահառուի ընտրության հարցում, ապա Շահառուի մի քանի թեկնածու լինելու դեպքում հասանելիք գումարը կբաժանվի առկա Շահառուների միջև հավասարաչափ:

7. Շահառուներին տրամադրվող աջակցության (փոխառության) գումարը կազմում է մինչև 5000.0 հազար ՀՀ դրամ: Վերոնշյալ աջակցությունը տրամադրվում է այդ նպատակի համար ձևավորված առանձին դրամագլխի միջոցների հաշվին: Դրամագլուխը ձևավորվում

է ՀՀ պետական բյուջեի միջոցներից, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց նվիրատվություններից, ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:

8. Դրամագլխի ֆինանսական միջոցները կարող են օգտագործվել միայն սույն Կարգի նպատակների իրականացման համար:

9. Հիմնադրամի և Շահառուի հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն Կարգով, դրանց հիման վրա Հիմնադրամի և Շահառուի միջև կնքված պայմանագրերով:

10. Փոխառության տրամադրման ժամկետը չի կարող գերազանցել տրամադրման պահից հաշված 60 (վաթսուն) ամիսը:

11. Սույն Կարգի շրջանակներում միևնույն Շահառուին աջակցություն կարող է տրամադրվել միայն մեկ անգամ:

12. Փոխառության գումարը մարվում է տարաժամկետ վճարման եղանակով՝ սկսած փոխառության տրամադրմանը հաջորդող 13-րդ ամսից՝ համաձայն Շահառուի և Հիմնադրամի միջև համաձայնեցված ժամանակացույցի:

13. Սույն կարգի իրականացման հիմնական փուլերն են՝

1) Զոհված անձանց հաշվառումը,
2) Շահառուների ճանաչումը,
3) Շահառուների կարիքների և կարողությունների գնահատումը,
4) Շահառուների համար անհատական գործի կազմումը,
5) Շահառուներին տրամադրվելիք աջակցության վերաբերյալ առաջարկի մշակումը, ըստ անհրաժեշտության՝ գործարար ծրագրի կազմումը և հաստատումը,
6) Գործարար նախաձեռնությունների իրագործման աջակցությունը և ֆինանսական կամ գույքային աջակցության տրամադրումը՝ անտոկոս փոխառությունների տրամադրման միջոցով,
7) «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն» ծրագրի շրջանակներում Շահառուների համար դասընթացների կազմակերպումը,
8) Շահառուների կողմից արդեն իսկ իրականացվող գործարար ծրագրերի աջակցությունը,

9) Շահառուների կողմից փոխառությունների տարաժամկետ ետ վերադարձը (0 % տոկոսադրույքով՝ համաձայն սահմանված պայմանների):

14. Սույն Կարգն իրագործվելու է Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի մարզային մասնաճյուղերի անմիջական ներգրավմամբ՝ Շահառուներին գործնական աջակցության տրամադրման և նրանց փոխարեն որոշ դեպքերում անհրաժեշտ գործողությունների իրականացման միջոցով: Նման գործողություններն ու գործառույթները ներառում են.

- Ա/Ձ գրանցելու, ընկերություն ստեղծելու կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ առանց իրավաբանական անձ գրանցելու ձեռնարկատիրական գործունեության մեկնարկի ապահովում,
- իրավաբանական, հաշվապահական և այլ վարչական աջակցություն,
- խորհրդատվական ծառայություններ,
- ընթացիկ գործունեության աջակցություն,
- արտահանման ներուժի կամ ուղղվածության դեպքում՝ արտահանման խթանման անհրաժեշտ աջակցության տրամադրում,
- անհրաժեշտ այլ գործողություններ:

III. **ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ**

15. Զոհված անձանց հաշվառումն իրականացվում է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից:
Մինչև 2016թ. մայիսի 1-ը Զոհված անձանց վերաբերյալ տեղեկատվությունը ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՀ էկոնոմիկայի, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություններ է ներկայացնում ՀՀ կառավարության սույն որոշման ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում:
2016թ. մայիսի 1-ից հետո Զոհված անձանց վերաբերյալ տեղեկատվությունը ՀՀ պաշտպանության նախարարությունը յուրաքանչյուր ամսվա 1-ի դրությամբ՝ մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 10-ը ներկայացնում է ՀՀ էկոնոմիկայի, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություններ:

16. Սույն կարգի 14-րդ կետով նախատեսված տեղեկատվությունը ստանալուց հետո ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը յոթ աշխատանքային օրվա ընթացքում այն ներկայացնում է սոցիալական աջակցության տարածքային գործակալություններին և/կամ բաժիններին (այսուհետ՝ Սոցիալական մարմիններ): Սոցիալական մարմինները վերոնշյալ տեղեկատվությունը ստանալուց հետո մեկամսյա ժամկետում ճանաչում են Շահառուներին և Հիմնադրամի մարզային մասնաճյուղերի

ներկայացուցիչների հետ համատեղ իրականացնում կարիքների նախնական գնահատում և դրա վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնում են ՀՀ էկոնոմիկայի նախարարություն և Հիմնադրամ:

17. Հիմնադրամի մարզային մասնաճյուղերի ներկայացուցիչները՝ Սոցիալական մարմինների հետ համատեղ, Շահառուներին անհատական այցելությունների միջոցով իրականացնում են Շահառուների կարիքների և կարողությունների վերջնական գնահատում՝ նախնական գնահատման արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը ստանալուց հետո յոթ աշխատանքային օրվա ընթացքում:

18. Հիմնադրամի մարզային մասնաճյուղերի աշխատողներն անհատական այցելություններն իրականացնելուց և Շահառուների կարիքների ու կարողությունների գնահատումն ամփոփելուց հետո յոթ աշխատանքային օրվա ընթացքում կազմում են և Հիմնադրամի կենտրոնական գրասենյակ են ներկայացնում սույն Կարգի 28-րդ կետում նշված գործի 2-րդ և 3-րդ ենթակետերով նախատեսված փաստաթղթերը:

19. Այն դեպքում, երբ սույն կարգի 18-րդ կետով նախատեսված աջակցության տրամադրման նախնական առաջարկը չի նախատեսում գործարար ծրագրի իրականացում, Հիմնադրամն աջակցության տրամադրման նախնական առաջարկը ստանալուց հետո յոթ աշխատանքային օրվա ընթացքում կազմում է աջակցության տրամադրման ծրագիր և այն ներկայացնում հաստատման՝ սույն Կարգի շրջանակներում ձևավորված խորհրդին:

20. Այն դեպքում, երբ սույն կարգի 18-րդ կետով նախատեսված աջակցության տրամադրման նախնական առաջարկով նախատեսվում է գործարար ծրագրի իրականացում, Հիմնադրամի կողմից Շահառուների համար կազմակերպվում են դասընթացներ «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն» ծրագրի շրջանակներում:
Շահառուները դասընթացի ավարտին Հիմնադրամի մարզային մասնաճյուղերի ներկայացուցիչների և դասընթացավարների օգնությամբ կազմում են գործարար ծրագրեր, որոնք Հիմնադրամի մարզային մասնաճյուղերի կողմից 3-օրյա ժամկետում ներկայացվում են Հիմնադրամի կենտրոնական գրասենյակ:

21. Հիմնադրամը սույն կարգի 20-րդ կետով նախատեսվող գործարար ծրագիրը ստանալուց հետո յոթ աշխատանքային օրվա ընթացքում կենտրոնական գրասենյակում կազմում է գործարար ծրագրի վերջնական տարբերակը և այն ներկայացնում հաստատման խորհրդին:

22. Սույն կարգի 16-րդ, 17-րդ և 18-րդ կետերով նախատեսված գործողություններն իրականացվում են ավելի ուշ Զոհված անձանց Շահառուներին առաջնահերթություն տալու սկզբունքով:

IV. **ԽՈՐՀՈՒՐԴԸ**

23. Սույն կարգով նախատեսված դրույթների իրականացման նպատակով ստեղծվում է ՀՀ էկոնոմիկայի, ՀՀ պաշտպանության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունների, Հիմնադրամի ներկայացուցիչներից և Դրամագլխի համալրմանը 10 և ավել միլիոն ՀՀ դրամի չափով մասնակցություն ունեցած ֆիզիկական և իրավաբանական անձանցից (ներկայացուցիչներից) ձևավորված խորհուրդ, որի անհատական կազմն ու գործունեության աշխատակարգը հաստատում է ՀՀ էկոնոմիկայի նախարարը:

24. Խորհուրդը՝

1) իր աշխատանքային գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով, որոնց ընթացքում կայացած որոշումներն ընդունում է քվեարկության միջոցով կամ վերջիններիս վերաբերյալ անցկացված հարցման կարգով,
2) հաստատում է Շահառուին տրամադրվելիք աջակցության ծրագիրը,
3) հաստատում է Հիմնադրամի տնօրենի և Շահառուի միջև կնքվող անտոկոս փոխառության կամ տարաժամկետ վճարման պայմանով գույքի տրամադրման պայմանագրի օրինակելի ձևը,
4) հաստատում է դիտանցի համար Շահառուի կողմից պարբերաբար ստացվող տեղեկատվության ձևը և կարգը,
5) առաջարկություններ է ներկայացնում ՀՀ էկոնոմիկայի նախարարին՝ սույն կարգում փոփոխություններ և լրացումներ իրականացնելու վերաբերյալ:

25. Խորհրդի նիստերը համարվում են իրավազոր, եթե դրանց մասնակցում է խորհրդի անդամների կեսից ավելին:

26. Խորհրդի որոշումներն ընդունվում են կողմ քվեարկած անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

27. Խորհրդի դրական որոշման հիման վրա հաջորդող 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում (բացառությամբ Շահառուի կողմից ուշացման դեպքերի) Հիմնադրամի տնօրենը Շահառուի հետ կնքում է աջակցության՝ անտոկոս փոխառության կամ տարաժամկետ վճարման պայմանով գույքի տրամադրման պայմանագիր:

V. ՓԱՍՏԱԹՂԹԱՎՈՐՈՒՄ

28. Սույն Կարգի շրջանակներում Շահառուներին տրամադրվող աջակցության հետ կապված բոլոր գործողությունները պետք է պատշաճ կերպով փաստաթղթավորվեն և պահպանվեն առանձին գործով, որը պետք է ներառի.
   1) Շահառուի ճանաչման ուղղությամբ իրականացված գործողությունների նկարագրությունը,
   2) Շահառուի դիմումն աջակցություն ստանալու համար,
   3) Շահառուին աջակցություն տրամադրելու վերաբերյալ նախնական առաջարկները,
   4) Շահառուին աջակցություն տրամադրելու վերաբերյալ վերջնական առաջարկները,
   5) Շահառուին աջակցություն տրամադրելու վերաբերյալ խորհրդի որոշումը,
   6) Շահառուի և Հիմնադրամի տնօրենի միջև կնքված պայմանագիրը,
   7) Տեղեկատվություն սույն Կարգի նպատակների իրականացման համար Շահառուին տրամադրված աջակցության և իրականացված գործողությունների մասին,
   8) Դիտանցի իրականացման արդյունքների մասին տեղեկատվություն,
   9) Այլ տեղեկություններ՝ ըստ անհրաժեշտության:

29. Աջակցություն ստացած Շահառուները հաշվառվում են Հիմնադրամի կողմից վարվող հաշվառման մատյանում: Հաշվառման մատյանի ձևը և վարման կարգը սահմանում է խորհուրդը:

VI. ԴԻՏԱՆՑՈՒՄ

30. Տրամադրված աջակցության դիտանցումն իրականացվում է Հիմնադրամի կողմից: Դիտանցման իրականացման պայմանները սահմանվում են սույն կարգի 27-րդ կետով նախատեսված պայմանագրով, ինչպես նաև Շահառուից պարբերաբար ստացվող տեղեկատվության միջոցով: Հիմնադրամը դիտանցում է իրականացնում նաև Շահառուին պարբերական ուղղակի այցելությունների միջոցով՝ առնվազն տարին մեկ անգամ՝ պարզելու և գնահատելու տրամադրված աջակցության օգտագործման նպատակայնությունը և արդյունավետությունը:

VII. ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄ

31. Զոհված անձանց ընտանիքների անդամները և Շահառուները սույն Կարգի կիրառման հետ կապված բողոքները կարող են ներկայացնել Խորհրդին:

32. Խորհրդը սույն կարգի 31-րդ կետով նախատեսված բողոքը ստանալուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում է այն և կայացնում որոշում՝ դրա մասին տեղեկացնելով բողոքը ներկայացնողին:

33. Սույն կարգի 32-րդ կետով Խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով: